ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ,
ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

ՏԻԿԻՆ Հ.ՀԱԿՈԲՅԱՆԻՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՓՈՐՁԱԳԵՏԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

Ք.Երևան 30.01.2024 թ

Ռաշիդ Սերոբի Գալստյան՝ Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության իրավաբանական վարչության փորձագետ

Պայմանագիր N 25 առ 17.07.2023 թ.

Հաշվետու ժամանակաշրջան՝ **17.10.2023 թ.-16.01.2024թ.**

Համաձայն պայմանագրի պահանջների իմ կողմից հաշվետու ժամանակաշրջանում կատարվել են հետևյալ աշխատանքները.

1. աջակցել եմ Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը (այսուհետ՝ Նախարարություն) հանձնված կազմակերպությունների գործունեությունը կարգավորող իրավական ակտերի՝ օրենսդրությանը համապատասխանեցման աշխատանքներին.

2. իրականացրել եմ Նախարարություն ներկայացված դիմումների, բողոքների, առաջարկությունների և այլ գրությունների վերաբերյալ իրավական գնահատականների տրամադրման աշխատանքներ.

3. 54 գրություն եմ պատրաստել՝ որպես քաղաքացիների դիմումների և կազմակերպությունների գրությունների պատասխան.

4. ամենօրյա խորհրդատվություն եմ տրամադրել Նախարարության և Նախարարության համակարգի կազմակերպությունների աշխատակիցներին՝ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի ոլորտների իրավական կարգավորում պահանջող հարցերի վերաբերյալ.

5. Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N 450-Ն որոշման համաձայն՝ հաշվետու ժամանակահատվածում իրականացրել եմ պարտադիր զինվորական ծառայության 2023 թվականի ձմեռային զորակոչից տարկետումների տրամադրման գործընթացի աշխատանքներ: 2024 թվականի հունվարի 16-ի դրությամբ 40 քաղաքացի են դիմել տարկետման համար՝ մարզական նվաճում ունենալու հիմքով, դիմումները հաշվառել եմ, ներկայացված փաստաթղթերը ուսումնասիրել եմ, մարզական նվաճումների հավաստիության ստուգման համար դրանք համեմատել եմ համապատասխան միջոցառումների արխիվային տվյալների հետ՝ ըստ հղումների: Ըստ գործող կարգի պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետման իրավունքի չեն հավակնել 5 քաղաքացի՝ ովքեր սահմանված կարգով իրազեկվել են այդ մասին: 35 մարզիկների՝ պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետման վերաբերյալ, փաստաթղթերը թվայնացրել եմ, կազմել եմ եզրակացություններ՝ իրավաբանական վարչության պետի ստորագրությամբ, որ նրանք գործող կարգի համաձայն հավակնում են պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետման իրավունքի, այդ մասին գրություններով, սահմանված կարգով, իրազեկելով նրանց, այնուհետև՝ կազմել եմ Հայաստանի Հանրապետության կառավարության համապատասխան որոշման նախագիծ՝ համապատասխան հիմնավորումով, որը անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթի հետ միասին ներկայացվել է պաշտպանության և արդարադատության նախարարություններ՝ կարծիքի, միաժամանակ՝ նախագիծը դրվել է հանրային քննարկման: Կարծիքները ստանալուց հետո կազմել եմ կարծիքների ամփոփաթերթեր և նախագծերը պահանջվող փաստաթղթերով ներկայացվել են ՀՀ վարչապետի աշխատակազմ: Մասնակցել եմ Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N 430-Ն որոշման 2-րդ հավելվածով (հանրակրթության և միջին մասնագիտական կրթության սովորողներ) և N 451-Ն որոշումով նախատեսված (բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողներ կամ դիմորդներ) պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետումների տրամադրման գործընթացի աշխատանքներին՝ ամենօրյա պարզաբանում տալով և իրավական աջակցություն ցուցաբերելով քաղաքացիներին և ուսումնական հաստատություններին.

6. Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 15-ի N 89-Ն որոշման համաձայն հաշվետու ժամանակահատվածում իրականացրել եմ պարտադիր զինվորական ծառայությունից քաղաքացիների ազատման գործընթացի աշխատանքներ: 17 քաղաքացի (անհատապես և մարզաձևի ֆեդերացիայի միջնորդությամբ) դիմել են մարզական նվաճումներ ունենալու հիմքով պարտադիր զինվորական ծառայությունից ազատման համար: 5 քաղաքացի չեն համապատասխանել գործող կարգի պայմաններին՝ մերժվել են պահանջվող մարզական նվաճումներ չունենալու հիմքով (այդ մասին տեղեկացվել են գրություններով), 1 քաղաքացի՝ ըստ փաստաթղթերի, պարտադիր զինվորական ծառայության ենթակա էր 2024 թվականի ձմռան զորակոչի ժամանակ, իսկ 11 մարզիկի պարտադիր զինվորական ծառայությունից ազատման համար կազմել եմ Կառավարության 3 որոշման նախագիծ (փաստաթղթերը տարբեր ժանակներում ներկայցվելու հանգամանքից ելնելով՝ 2 անհատական որոշում և 1 որոշում՝ մի շարք մարզիկների վերաբերյալ), որոնք համապատասխան փաստաթղթերի փաթեթի հետ միասին (թվայնացված անձնական գործեր, հիմնավորումներ, առաջնորդող գրություններ) ներկայացվել են պաշտպանության և արդարադատության նախարարություններ՝ կարծիքի, միաժամանակ՝ կառավարության որոշումները դրվել են հանրային քննարկման: Կարծիքները ստանալուց հետո կազմել եմ կարծիքների ամփոփաթերթեր.

7. Նախարարության անունից համապատասխան իրավական ակտերով սահմանված կարգով իրավաբանական անձանց հետ հուշագրերի կնքման հետ կապված՝ կարծիք եմ նախապատրաստել և ներկայացրել մեկ հուշագրի վերաբերյալ,

8. իրականացրել եմ Նախարարության գործունեության ոլորտների իրավական ակտերի Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխանության ապահովման աշխատանքներ, իրավական ակտերի վերաբերյալ կարծիք նախապատրաստելուց բացի կազմել եմ նաև Հայաստանի Հանրապետության կառավարության չորս որոշման նախագիծ:

Փորձագետ՝

Ռաշիդ Գալստյան